

ՎԵՐԳԻՒ

Բաղդյաթ



# ՈՒԽՏԱՎՈՐ ԱՂՎԵՍԸ

Յ91.99Կ

Թ-Յ3

ՊԵՏՆՐԱՏ

891.99 Կ

Թ-33

Վ Ե Ր Դ Ի

30 MAY 2011

# ՈՒՆՏԱՎՈՐ ԱՂՎԵՍԸ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԵՔՑԱԹ

Հին գրույց

Նկարներ  
Յ.Ե. ԳՐԱԳՐԱՐՑԱՆՆԻ


ՊԵՏՏՐԱՏ

ՀԱՅԵՍ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՑԵՐԵՎԱՆ 1939

2015018

18 APR 2013

8724



Գեղին մոտիկ, մացառոտ սարում ապ-  
րում եր մի աղվես:

Եղ աղվեսն ենքան գող եր, ենքան գող,  
վոր ել չեմ կարող ասել: Ամեն գիշեր սարից  
իջնում եր գեղ ու խփում տանում եր ինչ  
վոր պատահեր, հավ, սագ, բադ, հնդկահավ,  
մինչև անգամ փոքրիկ գառ ու ուլ ել եր  
հափշտակում նա...

Ու ենքան ել խորամանկ եր, վոր միշտ  
ել կարողանում եր խաբս տալ ու ազատվել  
շներից:

Եսպես անցավ մի առ ժամանակ, վերջապես  
գեղացիք աղվեսի վրա դայրացած, վորոշեցին  
ինչ կերպով ել լինի, նրան բռնել, կամ սատ-



34233-62

կացնել: Ու գեղի վորսորդները սկսեցին վորսի  
շներով ու հրացաններով շրջել նրա յետովից...  
Եդ ել բավական չե, աղվեսի բնակած քա-  
րափի շուրջը թակարդներ լարեցին ու թու-  
նավոր կերեր գցեցին: Աղվեսն եդ իմանալով,  
որերով բնից դուրս չեր գալիս:

Ի՞նչ անի. դուրս գա, մեկ ել տեսար ընկավ  
թակարդը, կամ միամիտ, թունավոր միա կե-  
րավ, կամ ընկավ շների բերանը... Բայց և  
խոմ չպետք է բնում վեր ընկած մնա, ու սովա-  
մահ լինի: Վերջապես, սովից ստիպված, նա  
դուրս եկավ մի որ ու գնաց գեղի գյուղ:

Կտուրի վրայից մի աքլոր առաջի անգամ  
տեսավ նրան ու կանչեց հավերին.

— Հավան, փախե՛ք, փախե՛ք, գող աղվեսը  
եկավ...

Եդ ձենի վրա հավ ու ճիվ խառնվեցին իրար,  
ձեն ձենի տվին, շները զարմացած սկսեցին  
հաջոց բարձրացնել, վողջ թաղը հարայ հրոցն  
ընկավ...

Եդ տեսնելով աղվեսը, աննկատելի, պա-  
տերի տակով ծլկեց ու անցավ գեղի մյուս  
կողմը:

Եղտեղ ել մի սագ տեսավ աղվեսին. տեսավ  
թե չե, ենպիսի մի ճղավոց բարձրացրեց, վոր



— Հավան, փախե՛ք, փախե՛ք, գող աղվեսը եկավ...

մոտիկ յեղած բոլոր սագերը, բաղերն ու մյուս  
թռչուններն իրար անցան:

— Ձե, գուր ե, — մտածեց աղվեսը, — աշ-  
խարհը փոխվել է, բոլորն ել ինձ ճանաչում  
են. այսուհետեւ ապրելու և սովամահ չլինելու  
համար, պետք է ուրիշ միջոցի գիտնել...

Ու նա գեղի աղբանոցներից մի քանի հին  
շորի կտորտանքներ հավաքելով շալակեց բե-  
րեց իրա բունը: Ու բնում նստած նա, եղ բե-  
րած ցնցոտիներից իրա համար մի «աբա»  
վերարկու ու մի հատ ել «սարըզ» գլխարկ  
շինեց...

Մյուս որ վերարկուն գցեց ուսին, գլխարկը  
դրեց գլխին, մի ձեռին գավաղան, մյուսին  
— տերողորմյան բռնած իջավ գեղը: Առաջին  
անգամ յերբ մի աքլոր տեսավ նրան, զարմա-  
ցած հարցրեց.

— Ա՛յ գող աղվես, ես ինչո՞ւ յես կերպարա-  
նափոխվել. առաջ բարի, ուր ես գնում եղպես...

— Հավ ուտելը թողել եմ, աքլոր ախպեր,  
գնում եմ հաջ ուխտի, վոր մեղքերս քա-  
վեմ, — պատասխանեց աղվեսը ջերմեռանդու-  
թյամբ, աչքերը յերկինք գցելով ու տերողոր-  
մյան քաշելով...

Աքլորը մտածեց, մտածեց ու՛

— Աղվես ախպեր ինձ ել կտանես քեզ  
հետ — յես ել եմ ուզում գալ հաջ ուխտ անել:



— Ա՛յ գող աղվես, ես ինչո՞ւ յես կերպարանափոխվել.  
առաջ բարի ուր ես գնում եղպես...

— Ինչի՞ չե, արի գնանք:

Աքլորն ընկավ աղվեսի հետեվից ու գնացին:

Մի քիչ գնացին, պատահեցին մի հավի:

— Ես ի՞նչ բան ե գող աղվես, ես ուր ես գնում աքլորին ել յետեվիցդ գցած,— հարցրեց հավը զարմացած:

— Հավ ուտելը թողել եմ, հավիկ քուրիկ գնում եմ հաջ ուխտի,— պատասխանեց աղվեսը: Հավը թե՛

— Աղվես ախպեր ինձ ել կտանե՞ս քեզ հետ:

— Ինչի՞ չե, դու յել արի,— ասաց աղվեսն ու յերեքով շարունակեցին ճամբան:

Մի քիչ գնացին, հանդիպեցին մի սագի: Սագն աղվեսին տեսնելով, մեկ ուղեց վոր փախչի, բայց աքլորին ու հավին նրա հետ տեսնելով, հետաքրքրվեց ու հարցրեց.

— Գող աղվես, եղ ուր ես գնում, աքլորն ու հավն ել հետդ առած:

— Հավ ուտելը թողել եմ, սագ ախպեր, գնում եմ հաջ, վոր մեղքերիս թողուլ յուն լինի,— պատասխանեց աղվեսը: Սագը դարձավ թե՛

— Աղվես ախպեր ի՞նչ կլինի յես ել գամ ձեզ հետ:

— Ի՞նչ պետք ե լինի, գալիս ես, արի,—

ասաց աղվեսն ու սագին ել առնելով իրենց հետ առաջ գնացին:

Մի քիչ գնացին հանդիպեցին մի կաչաղակի, վոր պոչը շարժելով ու չառթ-չուռթ անելով թռչկոտում եր ես ճյուղից ես ճյուղը: Կաչաղակն աղվեսի քարվանը տեսնելով, դարձացած հարցրեց.

— Ես ի՞նչ բանի յես, այ գող աղվես, ես ուր եք գնում եղպես հավով-ճիվով:

— Հավ ուտելը թողել եմ, ախպեր կաչաղակ, գնում եմ հաջ ուխտի,— պատասխանեց աղվեսը:

— Ինձ ել կտանե՞ս, աղվես ախպեր,— խնդրեց կաչաղակը:

— Ինչի՞ չե, գալիս ես արի գնանք: Կաչաղակն ել միացավ դրանց խմբին ու առաջացան: Գնացին, գնացին հանդիպեցին մի արտուտի:

— Եղ ուր ես գնում գող աղվես. թրունելով ճամբից դուրս ու մի թմբի վրա նստելով, ասաց արտուտը:

— Հավ ուտելը թողել եմ, հիմա գնում եմ հաջ ուխտի, վոր մեղքերիս թողուլ յուն լինի— պատասխանեց աղվեսը:

— Ի՞նչ կլինի ինձ ել տանես:



— Ես ի՞նչ բանից եմ, ա՛յ գող աղվես, ո՛ւր եք  
գնում եղպես հավով-ճիւղով...

— Ի՞նչ կա վոր, գալիս ես դու ել արի,—  
ասաց աղվեսն ու արտուտին ել առնելով  
խմբի մեջ շարունակեցին ճամբան:

Շատ գնացին, թե քիչ, հանդիպեցին մի հո-  
պուպի, վոր ծառերի տակ յերկար կտուցով  
փորփրում ու իշխառանջ եր վորսում ու-  
տում:

Հոպուպը վոր տեսավ աղվեսին իրա խրմ-  
բով, զարմացած հարցրեց.

— Ա՛յ գող աղվես, ի՞նչ խաբար ե, ո՛ւր  
եք գնում եղպես...

— Հավ ուտելը թողել եմ, գնում եմ  
հաջ,— ասաց աղվեսը տերողորմյան շխլաց-  
նելով ու հորանջելով...

— Յեա ել գամ աղվես,— ասաց հոպուպը:

— Ե՛հ գալիս ես արի, ի՞նչ կա վոր, ա-  
սաց աղվեսը:

Ու հոպուպն ել խառնվեցվ ուխտավոր-  
ների խմբին ու ճամբեն շարունակեցին:

Աղվեսի միտքը ծուռ եր իհարկե: Սա  
թռչուններին ծուռ ու մուռ ճամբով սկսեց  
տանել դեպի իր բունը: Յերբ բավականին  
գնացել էյին, աշնան որ եր, ամպեց ու սկսեց  
մանր անձրև գալ:

— Ի՞նչպես անենք,— ասացին թռչուն-

ներն աղվեսին,—ենպիսի մի տեղ չգիտե՞ս  
վոր մտնենք պատասպարվենք, մինչև անձրևի  
կտրվելը...

— Ի՞նչպես չե. գիտեմ,—ասաց աղվեսը,—  
եստեղ ժայռերի մեջ մի լավ, ապահով տեղ  
կա. գնանք եստեղ մի քիչ հանգստանանք,  
ու անձրևն ել դադարի, նոր կշարունակենք  
մեր ճամբեն...

Ու աղվեսը թռչուններին առաջնորդեց  
ուղիղ իր բունը:

Նրա բունը հսկա ժայռերի տակ փորված  
նեղ ու յերկար մի անցք էր: Յերբ հասան,  
աղվեսը բոլորին արավ ներսը, ինքը բնի անցքի  
դեմ կկգավ ու կանչեց.

— Սքլոր ախպեր մոտեցիր, քեզ պետք  
ե ուտեմ:

— Վահ, ի՞նչպես թե ուտես, չե՞ դու  
ասացիր թե հավ ուտելը թողել եմ, հաջ ուխ-  
տի յեմ գնում... Ե՞դ ե քո ուխտը,— գոչեց  
աքլորը սարսափած:

— Գիտե՞ս ինչ կա, քեզ նրա համար եմ  
ուտում, վոր շատ հանցավոր ես,—ասաց աղ-  
վեսը:

— Ախր իմ հանցանքս ի՞նչ ե...

— Ի՞նչպես թե ինչ ե. ապա ես, վոր խեղճ

գեղացին վողջ որը տանջվում, տրորվում,  
ու գիշերը տուն գալով քնում ե, վոր մի  
քիչ հանգստանա, բայց դեռ կուշտ չքնած,  
մեկ ել դու կանչում ես քո ծուղրուղուն.  
հենց վոր կանչում ես, բանվորի տերը, կամ  
հերը նրան զարթնեցնում ու ելի ուղարկում  
են աշխատանքի, ու քո պատճառով չեն թող-  
նում խեղճ աշխատավորը մի կուշտ քնի ու  
հանգստանա:

Դա քիչ հանցանք ե... Այ հենց եդ արար-  
մունքիդ համար յես վորոշել եմ քեզ ու-  
տել...

Ու աղվեսն աքլորին բռնեց, պատառոտեց  
կերավ:

Յերբ վերջացրեց, դարձավ հավին թե՛

— Հավիկ քուրիկ, մոտ արի քեզ ել պետք  
ե ուտեմ:

— Ինչի՞, յես ինչ եմ արել ան հաջի աղ-  
վես,—լաց լինելով ասաց հավը:

— Դու ի՞նչ ես արել հա. ասեմ լսիր.  
ան հավ լավ ե, վոր քո խեղճ աղքատ պա-  
ռավն իր բերանից կտրի քեզ կերակրի, պահի,  
խնամի, իսկ դու գնաս ուրիշի տունը ածես...  
Ապա ես յեղամի, հը՞, քեզ եմ ասում յեղամի...  
Տո ուտելը քիչ ե. քեզ ավելի խիտ պատիժ  
ե հարկավոր... Ասաց աղվեսն ու հավին ել

բռնեց և մաքրագարդելուց հետո, գարձավ սազին՝

— Եհ, սազ ախպեր, մոտեցիր քեզ ել եմ ուտելու:

— Յէս ինչ եմ արել աղվես, իմ հանցանքս ի՞նչ ե, — աղերսեց սազը:

— Ո՛հ, ո՛հ, քո հանցանքդ բոլորից ծանր ե, — ասաց աղվեսը. — այ թե ինչ. գեղացին վճարան աշխատանք ե թափում մինչև վոր բրնձի արտի թմբերը կշափում ե, շուրը թողնում մարգերը լճացնում, բրինձը ցանում, ու հենց բուսնում ե թե չե, դու մտնում ես մարգերի մեջ, բրնձի նորարբույս ցողունները արմատախիլ անում ու բրինձն ել հետը ուտում ես... Դա քիչ հանցանք ե, հը՞, ապա ասան, քեզ ուտել պէտք ե թե չե... Ու աղվեսը սազին ել բռնեց ու կերավ. և յերբ վերջացրեց, գարձավ կաշաղակին.

— Հը, շատախոս ախպեր, հերթը քոնն ե, մոտեցիր տեսնեմ...

— Ախր յես ի՞նչ եմ արել, վոր ինձ ուտում ես, — տխուր կշկշաց կաշաղակը...

— Ասեմ ինչ ես արել. մոտիկ գեղում մի խեղճ, անտեր ու աղքատ պառավ կա, վոչ ինքն ե աշխատանքի ընդունակ, վոչ ել աշխատավոր ունի. նրա ապրուստի միակ մի-

ջոցն իրա հինգ վեց հատ հավերն են. նրանց ածած ձվերովն ե ապրում նա. իսկ դու, անխիղճ, անաստված. հսկում ես, հետևում, ու հենց վոր պառավի հավերից մեկն ու մեկն ածում ե, իսկույն վրա յես տալիս, թառի տակը կախած կողովի մեջն ես մտնում ու ձուն ծակում խմում ես...

— Լավ, եզ բոլորը ճիշտ ե հաշի աղվես. բայց միթե դու ինքդ ել չես գողանում. չե՞ վոր վորպես գողի, ամբողջ շրջանն ե քեզ ճանաչում. չե՞ վոր դու ինքդ ել ամբողջ կյանքդ գողությունով ես անցկացնում...

— Հըմ, յե՞ս... իմ բանն ուրիշ ե... Բայց դու սուտ ես ասում ու զրպարտում ես ինձ... Քանի վոր ամսից ավել ե, վոր յես հավ ու ճիւղի միս բերան չեմ առել... բայց գիտես ինչ, յես մտադիր եյի քեզ ներել ու ազատել... Դե վոր եղպես ե, թռնում ես մեծի յերես, վոչ պատիվ ես ճանաչում, վոչ հարգանք, ուրեմն անտեղի յե. լավն են կլինի, վոր քեզ ել ուտեմ... Ու աղվեսը կաշաղակին ել կերավ, ու դառնալով հարցրեց արտուտին...

— Հիմա դու ել պետք ե ասես թե հանցանք չունես ելի...

— Յես ի՞նչ եմ արել վոր, աղա աղվես:

— Դձ, ասեմ. միտդ ե վոր գեղացին  
կնոջը դրած եշի վրա, ուրախ-ուրախ գրու-  
ցելով հորանց տուն եր տանում, իսկ դու,  
անամոթ, անիրավ, անխիղճ արարած, կծկվե-  
ցիր ճամբի վրա, ու յերբ եշը մոտեցավ, հենց  
նրա վոտների տակից հանկարծ փրձթ, թռար,  
ու եշը խրտնելով խեղճ կնոջը խփեց գե-  
տին... Դա քիչ հանցանք ե... Ու աղվեսը հափ  
անելով արտուտին ել բռնեց ու կերավ: Մնաց  
հոպոպը:

Աղվեսը պպզել եր բնի դուռը, յերեսը  
դեպի ներս, իսկ հոպոպը բնի ներսը նստել  
եր մի քարի վրա և նայում եր դեպի դուռս.  
ու մինչ աղվեսն ընկել եր իր ուտելու հետը,  
հոպոպը տեսավ վոր մի խումբ վորսորդներ  
են գալիս դեպի աղվեսի բնի կողմը, հրա-  
ցաններով զինված ու բարակ շները քամակ-  
ներին գցած...

Յերբ արտուտին ել կերավ, աղվեսը դար-  
ձավ դեպի հոպոպը.

— Հը՛ ի՞նչ կասես հոպոպ ախպեր. քեզ ել  
ուտեմ թե չե... Բայց դու ի՞նչ ես վոր. մի պա-  
տառ, են ել միտդ իմ մսի նման հոտած...  
Ենքան ել հանցանք չունիս... Ընդհակառակը  
դու ողտակար թռչուն ես հողագործի հա-  
մար... Ե՛հ քեզ բաշխեցի ախպեր... Ոգտա-

կար թռչուն ես, բաշխեցի... Թռիր գնա քեզ  
համար ապրիր ու աղվեսի մեծահոգությունը  
պատմիր արար աշխարհին...

Իսկ հոպոպն այդ ժամանակ աշխատում  
եր վոր աղվեսին զբաղեցնի զրույցով, վոր նա  
յետ չգառնա ու վորսորդների գալը չիմանա,  
մինչև նրանք գան մոտենան... Ու նա աղ-  
վեսի հետ զրույցի բռնվեց...

— Դիտե՛ս աղա աղվես. ես որվա քո ա-  
րածդ դատ ու դատաստանը շատ արդարացի  
յեր, ու յես շատ հավանեցի... Ինչ վոր ասա-  
ցիր միանգամայն ճիշտ եյին... Ու՛ր եր ա-  
մեն տեղ, ամեն անգամ եղպես, քեզ նման  
արդար դատեյին, հանցավորներին եղպես  
պատժեյին, վոր աշխարհում բարին, լավն ու  
ազնիվը կարողանային անմխաս ապրել...

— Դե, վորտեղից բերենք քեզ նման խե-  
լացի ու ազնիվ թռչուն, վոր ես բաները  
հասկանա ու գնահատի... Դեռ շատերն ասում  
են թե աղվեսը գող ե, արնախում ե, վատ ե...  
Ել չեն ասում վոր նա արդարադատ ե, գո-  
ղերին պատժող...

Հոպոպը վոր աղվեսի բնի դռնից ամեն  
ինչ տեսնում եր, տեսավ վոր վորսորդները  
բոլորովին մոտեցան, ու շներն ել աղվեսի





Շներն իսկույն վրա ընկան ու սկսեցին գզգզել նրան:

հոտն առած, գետինը հոտոտելով, սկսեցին սրընթաց մոտենալ բնին...

— Դեհ քաշվիր, — ասաց հոպոպն աղվեսին, — քաշվիր մի կողմ, վոր թռչեմ գնամ. շնորհակալ եմ վոր ազատեցիր ինձ...

Հենց աղվեսը, քաշվեց մի կողմ, ու հոպոպը թռավ դուրս թե չե, շներն ու վորսորդներն աղվեսին շրջապատեցին, և քանի վոր աղվեսն ենքան եր կերել, վոր հազիվ եր տեղիցը շարժվում, ծլկել չկարողացավ ու շներն իսկույն վրա ընկան ու սկսեցին գզգզել նրան... Հոպոպը վոր նստել եր մոտիկ քարին, կանչեց.

— Հը՛, աղվես ախպեր, վո՞րն ե՛ւրդար դատր. քո՞ կատարածը թե՛ շների...

Ու եղպես գող աղվեսը սատկեց, և գեղացիք ազատվեցին նրանից:



Պատ. խմբագիրը՝ Հր. Քոչար  
Տեխ. խմբագիրը՝ Ան. Գասպարյան  
Սրբագրել է՝ Ա. Արզախանյան



Գլխավոր խմբագիր՝ Վ. 2086 Հրատ. 4748

Պատվեր 743 Տիրաժ 3000

Թուղթ 64×92 Տպագր. 1 մամ.

Մեկ մամ. նշան, հեղինակ. 8 մամ.

Հանձնված է արտադրության 22 հոկտեմբերի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 15 հունվարի 1939 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի, 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0400241

8724

ԳՐԱԸ 80 Կ.



ВЕРДИ  
ЛИСА ПАЛОМНИК  
ГИЗ АРМ ССР ЕРЕВАН